

**«Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը Երևանում տեղի ունեցած «Դեպի կրթություն բոլորի համար» խորագրով գիտաժողովում 21.12.2012թ.**

Հարգելի գործընկերներ, գիտաժողովի հարգելի մասնակիցներ.

Ես նույնպես ողջունում եմ «Դեպի կրթություն բոլորի համար» խորագրով գիտաժողովի բոլոր մասնակիցներին և մաղթում արդյունավետ աշխատանք: Համոզված եմ, որ այս գիտաժողովը և թեմային նվիրված ապագա բոլոր քննարկումները մեզ կօգնեն գործընթացներն ավելի արդյունավետ դարձնելու, առկա թերությունները վերացնելու և որ ամենակարևորն է՝ այս խնդիրների լուծման ճանապարհին աշխատանքայի ավելի մեծ թիմ ձևավորելու համար:

Ինչպես բոլորի համար էր կարևոր Տավուշի մարզում իրականացվող ծրագրերի հաջողությունը, այնպես էլ մեզ համար շատ կարևոր է գործընթացի հաջող իրականացումը Երևան քաղաքում և մյուս մարզերում, և կարծում եմ, որ ցանկացած դրական արդյունք կարող է լավ օրինակ դառնալ մյուսների համար:

Ներառական կրթությունը մատչելի դարձնելու գաղափարների իրագործումը մեզ համար շատ պատասխանատու գործի սկիզբ էր այն առումով, որ առաջինն էր Հայաստանի Հանրապետությունում և մեզ մոտ ծրագրի իրականացման վերջնական գնահատականները կարևոր էին ոչ միայն Տավուշի մարզի, այլ նաև ամբողջ հանրակրթության համար: Սկզբի դժվարությունները հաղթահարեցինք համագործակցված թիմային աշխատանքի շնորհիվ: Ժամանակ էր պետք, որպեսզի բոլոր ուսուցիչները, անկախ նրանից, թե ինչ առարկա են դասավանդում, ձեռք բերեն անհրաժեշտ հմտություններ ցանկացած կրթական պահանջ ունեցող երեխայի համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դարձան իրավահավասար բոլոր երեխաների հետ, նրանց տրվեց հնարավորություն բացահայտելու իրենց բոլոր ունակությունները, առավել ուշադրություն դարձվեց երեխայի ուժեղ կողմերը զարգացնելուն, որի արդյունքում երեխայի ընտանիքը դադարեց խուսափել միջավայրի հետ իր երեխայի հետ շփումից:

Այս ամենը նոր գաղափար էր ոչ միայն դպրոցի, այլև համայնքի և ընդհանրապես ամբողջ հասարակության համար: Դրականորեն փոխվեցին հարաբերությունները դպրոցի, ծնողի և հասարակության միջև: Դպրոցը դարձավ մեզ համար կարևոր խնդիրների լուծման խրախուսող, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան հայտնվեց գործընթացի կենտրոնում: Արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներում իրականություն դարձան հաշմանդամ և կրթական դժվարություններ ունեցող երեխաների հասանելի և հավասար կրթական հնարավորությունները: Մեծ ջանքեր պահանջվեցին հասարակության մեջ ճիշտ վերաբերմունքի ձևավորման, հաշմանդամության հիմնախնդիրների իրազեկման և ներառական կրթության կարևորության գիտակցման ուղղությամբ: Ներառական կրթությունը Տավուշի մարզի դպրոցներում արդեն տվել է իր արդյունքները, ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ համայնքում՝ հաղթահարելով առկա կարծրատիպերը մարդասիրական արժեքների տարածման և ամրապնդման շնորհիվ: Ծրագրի իրագործման ընթացքում առկա են ներառման բազմաթիվ հաջողված օրինակներ:

Պետք է փաստել, որ ձեռքբերումներով և ստեղծված կարողություններով հանդերձ մենք դեռ անելիքներ շատ ունենք և մեր ամենօրյա համատեղ աշխատանքի շնորհիվ ի վիճակի կլինենք դրականորեն փոխելու մեր հասարակության համար կարևոր այս հատվածը, արդյունքում ունենալով ոչ միայն ներառական դպրոց, այլ նաև ներառական համայնք, տնտեսության ներառական ճյուղեր և ընդհանրապես՝ ներառական պետություն: Սա է լինելու մեր գլխավոր նպատակը և այն իրագործելուց հետո մենք, միգուցե, սկսենք չօգտագործել ներառական բառը:

Հարգելի գործընկերներ.

Ծրագրի իրականացման ընթացքում, ձեռք բերած փորձից օգտվելով, կոչ եմ անում նվիրումով անցնել այս ճանապարհը, քանի որ համոզվել ենք, որ այն երեխաները, այն ընտանիքները, որոնք ծրագրի ուղղակի շահառուներն են, մեզանից ոչ պակաս են սիրում իրենց դպրոցը, համայնքը, երկիրը և ավելի շատ են նվիրվում հասարակությանը, շրջապատին:

Առիթն օգտագործելով՝ Տավուշի մարզպետի, Տավուշի մարզի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների, ուսուցիչների, ծնողների անունից շնորհակալություն եմ հայտնում ծրագիրն իրականացնող մեր բոլոր գործընկերներին, Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, Կրթության և գիտության նախարարությանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, այն բանի համար, որ մեզ մոտ իրականացված այս ծրագիրը լիովին արդարացված էր տարածքային համաչափ զարգացման ընդհանուր մոտեցումներում, և սահմանամերձ Տավուշը հայտնվեց գաղափարի ներդրման կենտրոնում:

Շնորհակալություն եմ հայտնում մեր ամենօրյա աշխատանքային գործընկերներին, <<Առաքելություն Արևելք>> և <<Հույսի կամուրջ>> կազմակերպություններին, որոնց բոլոր ուժերը ներդրվեցին՝ հնարավորինս լավ արդյունքներ ապահովելու համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությանը և անձամբ Ձեզ՝ պարոն Սթրեյդ, ոչ միայն ծրագրին աջակցելու և օգնելու համար, այլ նաև սահմանամերձ Տավուշում իրականացրած բոլոր գործերի համար:

***Շնորհակալություն***